ԱՐՔԻՄԵԴ

Արքիմեդը մեծ հայրենասեր էր և կարողացավ երկու տարի անընդհատ իր հայրենի Սիրակուզա քաղաքը պաշտպանել հռոմեական զավթիչների հարձակումներից: Նրա ստեղծած մեքենաները հսկայական քարեր ու գերաններ էին նետում հռոմեական զորքի և նավերի վրա: Հատուկ պատրաստված հայելիների միջոցով նա կարողացավ այրել նրանց նավերը: Հռոմեացիները սարսափած էին: Սիրակուզան ընկավ միայն դավաճանությամբ, իսկ Արքիմեդը սպանվեց հռոմեական զինվորի կողմից այն պահին, երբ ավազի վրա երկարաչափական հաշվարկներ էր կատարում:

Արքիմեդը ծնվել է մ. թ. ա. 287 թվականին, Սիցիլիայի Սիրակուզա քաղաքում: Նրա հայրը՝ հույն նշանավոր աստղագետ և մաթեմատիկոս Ֆիդեյը լրջորեն զբաղվում է որդու դաստիարակությամբ և ինքն էլ դառնում է նրա ուսուցիչը: Շատ շուտով աշակերտը գերազանցում է իր ուսուցչին և մեկնում Ալեքսանդրիա՝ այդ շրջանում հունական գիտության և մշակույթի կենտրոն: Տեղի հանրահայտ ու խոշորագույն գրադարանը դառնում է Արքիմեդի ամենասիրելի վայրը:

Հարուստ գիտելիքներով զինված Արքիմեդը վերադառնում է հայրենիք և զարմանալի գյուտեր ու հայտնագործություններ կատարում: Իր պատրաստած սարքի միջոցով կարողացավ հաշվել արևի տրամագիծը, ստեղծեց դաշտերը ոռոգող խխունջաձև մեքենա, օգտագործեց լծակները և ճախարակները մեծ ծանրություններ բարձրացնելու համար: Դրանց միջոցով նա առանց դժվարության կարողացավ ծով իջեցնել իր կառուցած հսկայական նավը: Հայտնի են նրա թևավոր խոսքերը՝ տվեք ինձ հենման կետ և ես շուռ կտամ երկիրը: Անհավատալի էին մաթեմատիկայում կատարած նրա հաշվարկներն ու հայտնագործությունները: Սրամիտ և ինքնատիպ մեթոդներով նա կարողացավ հաշվել զանազան կորերի երկարություններ ու մակերևույթների մակերեսներ: Դրանցում նա կանխատեսել էր մոտ երկու հազարամյակ հետո մաթեմատիկայում արված հեղափոխական մտքի որոշ առանցքային մոտեցումներ: Ժամանակակիցների համար շատ զարմանալի էր նրա հաշվարկը ավազահատիկների թվի վերաբերյալ. եթե ողջ արեգակնային համակարգը լցված լինի ավազահատիկներով, ապա դրանց թիվը պակաս կլինի 10 -ը ինքն իրենով 67 անգամ բազմապատկելուց հետո ստացված թվից:

Արքիմեդը մեծ հայրենասեր էր և կարողացավ երկու տարի անընդհատ իր հայրենի Սիրակուզա քաղաքը պաշտպանել հռոմեական զավթիչների հարձակումներից: Նրա ստեղծած մեքենաները հսկայական քարեր ու գերաններ էին նետում հռոմեական զորքի և նավերի վրա: Հատուկ պատրաստված հայելիների միջոցով նա կարողացավ այրել նրանց նավերը: Հռոմեացիները սարսափած էին: Սիրակուզան ընկավ միայն դավաճանությամբ, իսկ Արքիմեդը սպանվեց հռոմեական զինվորի կողմից այն պահին, երբ ավազի վրա երկարաչափական հաշվարկներ էր կատարում: